

**ԲԺՇԿԱԿԱՆ ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ
ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N «ԳՀԱՊՁԲ-2017/16-10-ԵՊԲՀ»**

ք.Երևան

« 27 » « ցեկտեմբեր » 2017թ.

«Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամը, ի դեմս ռեկտոր Ա.Ա.Մուրադյանի, որը գործում է կազմակերպության կանոնադրության հիման վրա, այսուհետ՝ «Գնորդ», մի կողմից, և «Ար.Մեղտեխնիկա» ՍՊ ընկերությունը, ի դեմս տնօրեն Վ.Թորոսյանի, որը գործում է կանոնադրության հիման վրա, այսուհետ՝ «Վաճառող», մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման-ժամանակացուցով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Գնորդն իրավունք ունի՝

2.1.1 Ապրանքը պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 5 օրից ավելի:

2.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք՝

ա) պահանջել հատուցելու ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.

բ) չընդունել ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ապրանքը պայմանագրին համապատասխանող որակի ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.3 կետով նախատեսված տուգանքը.

գ) հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ապրանքի համար վճարված գումարը:

2.1.3 Եթե հանձնվել է պայմանագրով որոշվածից պակաս քանակի ապրանք, ապա՝

ա) պահանջել լրացնելու ապրանքի պակաս հանձնված քանակը,

բ) հրաժարվել հանձնված ապրանքից և դրա համար վճարելուց, իսկ եթե ապրանքի համար վճարվել է, ապա պահանջել վերադարձնելու վճարված գումարը և վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.4 Եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ ապրանք, իր ընտրությամբ՝

ա) ընդունել տեսակի վերաբերյալ պայմանին համապատասխանող ապրանքը և հրաժարվել մնացած ապրանքներից.

բ) հրաժարվել հանձնված բոլոր ապրանքներից և պահանջել վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը.

գ) պահանջել տեսակի վերաբերյալ պայմանին չհամապատասխանող ապրանքի անհատույց փոխարինում պայմանագրով նախատեսված տեսակին համապատասխան ապրանքով:

2.1.5 Վաճառողի կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել ապրանքի մատակարարման նոր ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.6 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է ապրանք՝ պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը:

2.1.7 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.

2.1.7.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 5 օրից ավելի,

2.1.8 Զննել ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2 Գնորդը պարտավոր է՝

2.2.1 Կատարել պայմանագրին համապատասխան մատակարարված ապրանքի ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

2.2.2 Վաճառողի հանձնած ապրանքից պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2.3 Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված ապրանքն ընդունելու դեպքում Վաճառողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

2.2.4 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով ապրանքի բնույթից և նշանակությունից:

2.2.5 Պայմանագրի 2.3.4 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Վաճառողին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.3 Վաճառողն իրավունք ունի՝

2.3.1 Գնորդից պահանջել ընդունելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված ապրանքը:

2.3.2 Գնորդից պահանջել վճարելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված և Գնորդի կողմից ընդունված ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները:

2.3.4 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Գնորդն էականորեն խախտել է պայմանագիրը:

2.3.4.1 Գնորդի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե բազմիցս խախտվել են ապրանքի համար վճարելու ժամկետները:

2.3.5 Գնորդի համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել ապրանքը:

2.4 Վաճառողը պարտավոր է՝

2.4.1 Գնորդին հանձնել ապրանքը՝ պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով:

2.4.2 Ապահովել ապրանքի մատակարարումը պայմանագրի 2.1.2 կետի բ) ենթակետին և (կամ) 2.1.5 կետին համապատասխան՝ Գնորդի կողմից սահմանված ժամկետներում:

2.4.3 Գնորդին հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ ապրանք:

2.4.5 Գնորդին հանձնել պայմանագրով նախատեսված որակի և քանակի ապրանք՝ պայմանագրով նախատեսված ժամկետներում և հասցեով, իսկ Գնորդի պահանջով տրամադրել ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

2.4.6 Թերի մատակարարում թույլ տալու դեպքում, պայմանագրով նախատեսված կարգով, լրացնել թերի մատակարարվածը:

2.4.7 Հետ տանել Գնորդի կողմից պայմանագրի 2.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:

2.4.8 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.9 Գնորդին հանձնել ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը:

2.4.10 Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.4.11 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Գնորդին:

3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի գինը կազմում է 38.300.000,00 /երեսունուրթ միլիոն երեք հարյուր հազար/ ՀՀ դրամ: Պայմանագրի գինը ներառում է պայմանագրի կատարումն ապահովելու նպատակով Վաճառողի կողմից կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ հարկերը, տուրքերը, փոխադրման, ապահովագրման ծախսերը, պարզավճարները և ակնկալվող շահույթը:

Ապրանքի մատակարարման գինը կայուն է և Վաճառողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Գնորդը նվազեցնելու այդ գինը:

Մույն պայմանագրի մատով Վաճառողը Ապրանքի մատակարարումը իրականացնում է համապատասխան ֆինանսական միջոցներ նախատեսվելուց հետո, որի վերաբերյալ կողմերի միջև կկնքվի համապատասխան համաձայնագիր:

3.2 Գնորդն իրեն մատակարարված ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև 2018 թվականի դեկտեմբերի 20-ը:

4. ԱՊՐԱՆՔԻ ՈՐԱԿԸ ԵՎ ԵՐԱՇԽԻՔԸ

4.1 Վաճառողը երաշխավորում է մատակարարված ապրանքի որակի համապատասխանությունը պետական ստանդարտի պահանջներին:

4.2 Հիմնական միջոց հանդիսացող N 1 և N 2 չափաբաժինների ապրանքների համար երաշխիքային ժամկետ է սահմանվում տեղադրման պահից հաշված 24 ամսից ոչ պակաս ժամանակահատվածը: Եթե երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել մատակարարված ապրանքի թերություններ, ապա Վաճառողը պարտավոր է իր հաշվին, Գնորդի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

5. ԱՊՐԱՆՔԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ ԵՎ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

5.1 Մատակարարված ապրանքն ընդունվում է Գնորդի և Վաճառողի միջև հանձման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսվում է Գնորդի և Վաճառողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ապրանքի մատակարարման համար նախատեսված օրը ներառյալ Վաճառողը Գնորդին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Վաճառողը հանձման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

5.2 Եթե մատակարարված ապրանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Գնորդը պայմանագրի 5.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 10 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

5.3 Եթե մատակարարված ապրանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Գնորդը չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 5.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Գնորդը ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Վաճառողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

5.4 Եթե պայմանագրի 5.2 կետով սահմանված ժամկետում Գնորդը չի ընդունում մատակարարված ապրանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատակարարված ապրանքը համարվում է ընդունված և պայմանագրի 5.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Գնորդը էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած ապրանքի որակի և պայմանագրով նախատեսված մատակարարման ժամկետների պահպանման համար:

6.2 Վաճառողի կողմից պայմանագրով նախատեսված ապրանքի մատակարարման ժամկետների խախտման դեպքում Վաճառողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված ապրանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 1.1 կետում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարների հետ:

6.5 Գնորդի կողմից պայմանագրի 3.3 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

7. ԱՆՆԱԴԹԱՆԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄՄԺՈՐ)

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են

Պայմանագիրը «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ կետի հիման վրա կնքված լինելու դեպքում տուգանքը հաշվարկվում է պայմանագրի գնի այն մասի նկատմամբ, որի համար տվյալ տարվա ընթացքում հատկացվել են ֆինանսական միջոցներ և կնքվել է համաձայնագիր:

դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի՝ պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Եթե պայմանագրի կնքելու օրվան հաջորդող 6 ամսվա ընթացքում պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում, ապա պայմանագիրը լուծվում է:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ պայմանագիրը կնքելու նատակով կազմակերպված գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Գնորդը իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Գնորդը չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Գնորդի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ապրանքի ծավալների կամ ձեռք բերվող ապրանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.6 Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Վաճառողի առաջարկության առկայության դեպքում, պայմանով, որ Գնորդի մոտ չի վերացել ապրանքի օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Վաճառող կամ Գնորդ) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Վաճառողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Վաճառողը:

8.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.9 Վաճառողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Գնորդը հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Վաճառողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

8.10 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.11 Պայմանագիրը կազմված է 19 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.12 Պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8.13 Պայմանագրով նախատեսված ապրանքների մատակարարումն իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով: Պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում այդ նպատակով պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում: Ընդ որում, Վաճառողը համաձայնագիրը կնքում և Գնորդին ներկայացնում է համաձայնագիր կնքելու ծանուցումը ստանալու օրվանից տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում: Հակառակ դեպքում պայմանագիրը Գնորդի կողմից միակողմանիորեն լուծվում է:

10. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՅԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ԳՆՈՐԴ

«Երևանի Միսթար Շերացու
անվան պետական բժշկական համալսարան»
հիմնադրամ
ՀՀ, Երևան, իրավաբանական հասցե՝ Կորյունի 2
«Հայբիզնեսբանկ» ՓԲԸ, Տերյան մ/ճ
h/h 11500166513800
ՀՎՀՀ 01503448
/Ռեկտոր՝ Ա.Ա.Մուրադյան

/ստորագրություն/



ՎԱՃԱՌՈՂ

«Ար.Մեդտեխնիկա» ՄՊԸ
ՀՀ, ք.Երևան, Զաքյան 8
«Կոնվերս Բանկ» ՓԲԸ
Հ/Հ 1930041595160100
ՀՎՀՀ 02604367
Էլ. հասցեն՝ armedtechnical@gmail.com

Հեռ. (010) 58 57 63
Տնօրեն՝ Վ.Թորոսյան

/ստորագրություն/
Վ.Տ



ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆԱՆԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՏՈՒԹՅՈՒՆ

ՀՀ դրամ

Ապրանքի

| հրավերով նախատեսված չափաբանի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | անվանումը և ապրանքային նշանը | արտադրողը և ծագման երկիրը | տեխնիկական բնութագիրը | չափման միավորը | միավոր գինը/ՀՀ դրամ | ընդհանուր գինը/ՀՀ դրամ | ընդհանուր քանակը | մատակարարման | | |
|-------------------------------------|---|--|---------------------------|-------------------------------|----------------|---------------------|------------------------|------------------|--|---------------|--|
| | | | | | | | | | հասցեն | ենթակա քանակը | ժամկետը** |
| 1 | 33111350 | Ուլտրաձայնային հետազոտական համակարգ 3 տվիչով կոնվերսային, գծային և տրանսվագինալ Logiq F8 | GE Healthcare, ԱՄՆ | Նայել ստորև կցված չափելիաձում | հատ | 18 900 000,00 | 18 900 000,00 | 1 | Ք. Երևան Հերացի 58 և/կամ Մուրացան 114 հասցեներով | 1 | Նախատեսվում է ձեռք բերել 2018թ. ֆինանսական միջոցներ նախատեսվելուց հետո համապատասխան համաձայնագիր կնքելու օրվանից հաջված 10 օրացույցային օրվա ընթացքում |

| | | | | | | | | | | | |
|----------------------|----------|---|--------------------|-------------------------------|-----|---------------|---------------|---|---|---|--|
| 2 | 33111350 | Ուտրաձայնային հետազոտական համակարգ 3 սվիչով կոնվերսային, գծային և սեկտորային Logiq F8 | GE Healthcare, ԱՄՆ | Նայել ստորն կցված չավելվածում | հատ | 19.400.000,00 | 19.400.000,00 | 1 | բ. Երևան Հերացի 58 ն/կամ Սուրբազան 114 հասցեներով | 1 | Նախատեսվում է ձեռք բերել 2018թ. ֆինանսական միջոցներ նախատեսվելուց հետո համապատասխան համաձայնագիր կնքելու օրվանից հաշված 10 օրացույցային օրվա ընթացքում |
| ԸՆԴԱՄԵՆԸ | | | | | | | | | | | |
| 38.500.000,00 | | | | | | | | | | | |

** Եթե պայմանագիրը կնքվում է "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի երկրորդ կետի հիմամբ, ապա պրոնախարհը ժամկետի հաշվարկն իրականացվում է ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրվանից սկսած:

ԳՆՈՂ

«Երևանի Մլիխթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան»
 հիմնադրամ

ՀՀ, Երևան, իրավաբանական հասցե՝ Կորյունի 2
 «Հայրիգնեսարանկ» ՓԲԸ, Տերյան ս/Ճ
 հ/հ 11500166513800



ՀՎՀՀ 01503448
 Ա. Ա. Սուրբազան
 (ստորագրություն)
 Կ.Տ

ՎԱՃԱՆՈՂ

«Ար. Մեդտեխնիկա» ՍՊԸ
 ՀՀ, ք. Երևան, Զաքյան 8
 «Կոնվերս Բանկ» ՓԲԸ

Հ/Հ 1930041595160100

ՀՎՀՀ 02604367

Էլ. հասցեն՝ armedtechnical@gmail.com

Հեռ. (010) 58 57 63

Տարած. Վ. Թորոսյան



(ստորագրություն)
 Կ.Տ

1. Ուլտրաձայնային հետազոտական համակարգ 3 տվիչով՝ կոնվեքսային, գծային և տրանսվազինալ

Դիագնոստիկ հետազոտությունների համար նախատեսված հատուկ հնարավորություններով բազմաֆունկցիոնալ անդրաձայնային համակարգ, համալրված 3 տվիչով և անխափան սնուցման սարքով

- Տեխնիկական բնութագիր**
- Ամբողջապես թվային ունիվերսալ ուլտրաձայնային համակարգ
 - Աբդոմինալ հետազոտությունների հնարավորություն
 - Սանկաբարձական և գինեկոլեգիական հետազոտությունների հնարավորություն
 - Կարդիոլոգիական հետազոտությունների հնարավորություն
 - Նյարդաբանական հետազոտությունների հնարավորություն
 - Վնասվածքաբանական և օրթոպեդիկ հետազոտությունների հնարավորություն
 - Ուռուցիկական հետազոտությունների հնարավորություն
 - Էնդոկրինոլոգիական հետազոտությունների հնարավորություն
 - Անոթային հետազոտությունների հնարավորություն
 - Պեդիատրիկ հետազոտությունների հնարավորություն
 - Նեոնատոլոգիական հետազոտությունների հնարավորություն
 - Տրանսկրանիալ հետազոտությունների հնարավորություն
 - Օնկոլոգիական հետազոտությունների հնարավորություն

Ընդունող-հաղորդող թվային ալիքների քանակը՝ 225.700: Ամբողջապես թվային փոխարկիչ 12 բիտ: Համակարգի դինամիկ դիսպազոնը՝ 265Բ: Վիզուալիզացիայի խորությունը՝ 33 սմ: 8 հաղորդիչ ֆոկուսային զոնաների միաժամանակյա օգտագործման հնարավորություն: Խորությամբ ուժեղացման կարգավորիչների քանակը՝ 8: Դինամիկ ապերտուրայի առկայություն: Դինամիկ ֆիլտրի առկայություն: Ռեալ ժամանակի և ստոպ-կադրի ռեժիմներում պատկերի մեծացման հնարավորություն՝ 8 անգամ: Կադրերի մաքսիմալ հաճախականությունը՝ 1400կադր/վրկ:

Սարքի ռուսիֆիկացման առկայություն
Ռուսիֆիկացված տառա-թվային ստեղնաշարի առկայություն: 3 տվիչների միաժամանակ միացվելու հնարավորություն:

- Կառավարման վահանակի բնութագրերը՝**
- Լիարժեք երգոնոմիկ ստեղնաշար
 - Խորությամբ ուժեղացման կարգավորիչների քանակը՝ 8
- Մենստրային կառավարման էկրանի անկյունագիծը՝ 8.4"

- Մոնիտորի բնութագրերը**
- Էկրանի անկյունագիծը՝ 19"
 - բարձր խտությամբ LCD մոնիտոր, ազատ տեղափոխվող կոռնշտեյնի վրա պատվերով
- հնարավորությամբ

- Էկրանային մատրիցայի պիքսելները՝ 1280x1024
- Մոնիտորի քանակային գրադացիան՝ 256
- Թեքությունը՝ +25° – -90°
- Շրջադարձային հնարավորությունը՝ 90°
- Հորիզոնական տեղափոխման երկարությունը՝ 80սմ
- Ուղղահայաց տեղափոխման երկարությունը՝ 16սմ

- Մկանավորման ռեժիմները՝**
- В-ռեժիմ
- Մոնիտորի սանդղակի քարտերի քանակը՝ 25
 - Կեղծ գունավորման քարտերի քանակը՝ 9
 - Հիմնական հաճախականությունների առավելագույն քանակը՝ 4



• Հարմոնիկ հաճախականությունների մաքսիմալ քանակը՝ 4
Ստիրինգի ռեժիմի առկայություն

M-ռեժիմ

- Գունավոր M ռեժիմի հնարավորություն
- Անատոմիական M Ռեժիմի հնարավորություն

PW – Իմպուլս-ալիքային դոպլեր՝ անկյան շեղությամբ

- Դոպլերային սպեկտրի եզրագծում և ավտոմատ հաշվարկների հնարավորություն
- Արագությունների սանդղակ 0.1սմ/վ - 66սմ/վ
- PRF՝ 300-27900 Հց
- Սկանավորման անկյան մաքսիմալ շեղումը՝ $\pm 20^\circ$
- Սկանավորման անկյունների քանակը՝ 7

Սկանավորման անկյան կորրեկցիա՝ $\pm 90^\circ$, քայլը՝ 1°

CW – Մշտական-ալիքային դոպլերի հնարավորություն՝ անկյան շեղությամբ

- Դոպլերային սպեկտրի եզրագծում և ավտոմատ հաշվարկների հնարավորություն
- Արագությունների սանդղակ՝ 0.1սմ/վ - 61սմ/վ

CFM – Գունավոր դոպլերային քարտեզագրում

- Գունավորման քարտերի քանակությունը՝ 14
- PRF՝ 100-25000Հց
- Սկանավորման անկյան մաքսիմալ շեղումը՝ $\pm 20^\circ$
- Սկանավորման անկյունների քանակը՝ 7

• Շարժումների ու շնչառության ժամանակ առաջացած արտեֆակտների ճնշման ալգորիթմ

PD – Էներգետիկ դոպլեր

- Գունավորման քարտերի քանակությունը՝ 14
- PRF՝ 100-25000Հց
- Սկանավորման անկյան մաքսիմալ շեղումը՝ $\pm 20^\circ$
- Սկանավորման անկյունների քանակը՝ 7

Շարժումների ու շնչառության ժամանակ առաջացած արտեֆակտների ճնշման ալգորիթմ

Ինֆորմացիայի տրամադրում B, M, D-ռեժիմներում, B/B, B/M, B/C, B/C/D, B/P/D

Տրիպլեքսային ռեժիմի առկայություն

Ուղղորդված էներգետիկ դոպլերի հնարավորություն

Վիրտուալ կոնվեքսի ռեժիմի հնարավորություն՝ գծային տվիչով

Հյուսվածքային կողավորված հարմոնիկայի ռեժիմի առկայություն

Ինվերսված հյուսվածքային հարմոնիկայի հնարավորություն

Էլաստոգրաֆիայի ծրագրի առկայություն

Պանորամիկ սկանավորման ծրագրի հնարավորություն

B-ռեժիմում պատկերների ավտոմատիկ օպտիմիզացիայի ծրագրի առկայություն

Սպեկտրալ դոպլերի ռեժիմում պատկերների ավտոմատիկ օպտիմիզացիայի ծրագրի առկայություն

CFM և էներգետիկ դոպլերի ռեժիմներում պատկերների ավտոմատիկ օպտիմիզացիայի ծրագրի առկայություն

ՈԻՉ հետազոտությունների կարգաբերման և պերսոնալիզացիայի ծրագրի հնարավորություն

Ռեժիմների ավտոմատ փոփոխություն, չափումների ինիցիացիա սկանավորման ընթացքում

Ադապտիվ ալգորիթմի հիման վրա պատկերների օրգանոսպեցիֆիկ ռեժիմ և արտեֆակտների ճնշման հնարավորություն

- Շարժումների ու շնչառության ժամանակ առաջացած արտեֆակտների ճնշման ալգորիթմ


- B-ռեժիմից անկախ սկանավորման հաճախության փոփոխման հնարավորություն

- միոկարդի պատերի շարժման գունավոր ներկում

- Միոկարդի շարժումների հետագծի քանակային անալիզի հնարավորություն

1. Աբդոմինալ, մանկաբարձական և գինեկոլոգիական, ուռուղղիական և անոթային հետազոտությունների համար կոնվեքսային տվիչ:

- Երևացող ալիքների հաճախականությունների տիրույթը՝ 2.0-5.0ՄՀց
- Էլեմենտների քանակը՝ 128



- Թեքության ուղիուսը՝ 60մմ
- Սկանավորման անկյունը՝ 58°

Էկրանին ցուցադրվող կենտրոնական հաճախականությունների քանակը B-ռեժիմում՝ 4

2. Գծային տվիչ մակերեսային օրգանների և կառուցվածքային էլեմենտների, պերիֆերիկ անոթների, նեոնատոլոգիայի և պեդիատրիայի համար,

• Երևացող ալիքների հաճախականությունների տիրույթը՝ 4.0-13.0ՄՀց

• Էլեմենտների քանակը՝ 128

• Սկանավորվող տարածքի լայնությունը՝ 40մմ

• Էկրանին ցուցադրվող կենտրոնական հաճախականությունների քանակը B-ռեժիմում՝ 4

• Սկանավորման անկյան շեղումը՝ $\pm 20^\circ$

3. Արդումինալ, մանկաբարձական և զինեկոլոգիական և ուռոլոգիական հետազոտությունների համար միկրոկոնվեքսային տվիչ:

• Երևացող ալիքների հաճախականությունների տիրույթը՝ 4.2-10.0ՄՀց

• Էլեմենտների քանակը՝ 128

• Թեքության ուղիուսը՝ 11մմ

• Սկանավորման անկյունը՝ 128

Էկրանին ցուցադրվող կենտրոնական հաճախականությունների քանակը B-ռեժիմում՝ 3

Կադրերի առավելագույն քանակը կինոհանգույցում՝ 50000

Կինոհանգույցի առավելագույն տևողությունը՝ 27000վրկ

Կոշտ սկավառակի ծավալը՝ 500գԲ

DVD-RW

Ներկառուցված USB պորտերի քանակը՝ 6

Ստատիկ պատկերների ձայնագրման հնարավորություն CD/DVD, USB-flash և սկավառակի վրա, JPEG ֆորմատով

Դինամիկ պատկերների ձայնագրման հնարավորություն CD/DVD, USB-flash և սկավառակի վրա, AVI ֆորմատով

Արխիվացված ստատիկ պատկերների և կինոհանգույցների դիտելու ծրագիր արտաքին աշխատանքային կայանում՝ Windows ֆորմատով

Ծրագրային ու ապարատային ֆունկցիաներ, որոնք ապահովում են չմշակված ուլտրաձայնային տվյալների արխիվացման՝ հետագա օպտիմիզացիայի և մշակման համար:

Ծրագրային ու ապարատային ֆունկցիաներ, որոնք ապահովում են սարքի հեռակա դիագնոստիկայի հնարավորությունը:

Չափումներ B-ռեժիմում

Հեռավորության չափման հնարավորություն

Մակերեսի չափման հնարավորություն

Ծավալի չափման հնարավորություն

Անկյան չափման հնարավորություն

Չափումներ M-ռեժիմում

Հեռավորության չափման հնարավորություն

Արագության չափման հնարավորություն

Ժամանակային ինտերվալի չափման հնարավորություն

Մրտային կծկումների հաճախության չափման հնարավորություն

Չափումներ D-ռեժիմում

Գծային արագության չափման հնարավորության առկայություն

Միջին արագության չափման հնարավորության առկայություն

Ժամանակային ինտերվալների չափման հնարավորության առկայություն

Ռեզիստենտության ինդեքսի չափման հնարավորության առկայություն

Պուլսացիոն ինդեքսի չափման հնարավորության առկայություն

Ճնշման գրադիենտի չափման հնարավորության առկայություն

Ստենոզի աստիճանի չափման հնարավորության առկայություն

Մրտային կծկումների հաճախության չափման հնարավորության առկայություն



2. Ուլտրաձայնային հետազոտական համակարգ 3 տվիչով՝ կոնվեքսային, գծային և սեկտորային

Դիագնոստիկ հետազոտությունների համար նախատեսված հատուկ հնարավորություններով բազմաֆունկցիոնալ անդրաձայնային համակարգ, համալրված 3 տվիչով և անխափան սնուցման սարքով

Տեխնիկական բնութագիր

Ամբողջապես թվային ունիվերսալ ուլտրաձայնային համակարգ

Աբդոմինալ հետազոտությունների հնարավորություն

Մանկաբարձական և գինեկոլեգիական հետազոտությունների հնարավորություն

Կարդիոլոգիական հետազոտությունների հնարավորություն

Նյարդաբանական հետազոտությունների հնարավորություն

Վնասվածքաբանական և օրթոպեդիկ հետազոտությունների հնարավորություն

Ուռուցիկական հետազոտությունների հնարավորություն

Էնդոկրինոլոգիական հետազոտությունների հնարավորություն

Անոթային հետազոտությունների հնարավորություն

Պեդիատրիկ հետազոտությունների հնարավորություն

Նեոնատոլոգիական հետազոտությունների հնարավորություն

Տրանսկրանիալ հետազոտությունների հնարավորություն

Օնկոլոգիական հետազոտությունների հնարավորություն

Ընդունող-հաղորդող թվային ալիքների քանակը՝ 225.700: Ամբողջապես թվային փոխարկիչ 12 բիտ:

Համակարգի դինամիկ դիապազոնը՝ 265Բ: Վիզուալիզացիայի խորությունը՝ 33 սմ: 8 հաղորդիչ

ֆոկուսային զոնաների միաժամանակյա օգտագործման հնարավորություն: Խորությամբ ուժեղացման

կարգավորիչների քանակը՝ 8: Դինամիկ ապերտուրայի առկայություն: Դինամիկ ֆիլտրի առկայություն:

Ռեալ ժամանակի և ստոպ-կադրի ռեժիմներում պատկերի մեծացման հնարավորություն՝ 8 անգամ:

Կադրերի մաքսիմալ հաճախականությունը՝ 1400կադր/վրկ:

Սարքի ռուսիֆիկացման առկայություն

Ռուսիֆիկացված տառա-թվային ստեղնաշարի առկայություն: 3 տվիչների միաժամանակ միացվելու հնարավորություն:

Կառավարման վահանակի բնութագրերը՝

Լիարժեք էրգոնոմիկ ստեղնաշար

Խորությամբ ուժեղացման կարգավորիչների քանակը՝ 8

Սենսորային կառավարման էկրանի անկյունագիծը՝ 8.4"

Մոնիտորի բնութագրերը

• Էկրանի անկյունագիծը՝ 19"

• բարձր խտությամբ LCD մոնիտոր, ազատ տեղափոխվող կոռնշտեյնի վրա պատկերի հսկողություն

• Էկրանային մատրիցայի պիքսելները՝ 1280x1024

• Մոխրագույնի քանակային գրադացիան՝ 256

• Թեքությունը՝ +25° – -90°

• Շրջադարձային հնարավորությունը՝ 90°

• Հորիզոնական տեղափոխման երկարությունը՝ 80սմ

• Ուղղահայաց տեղափոխման երկարությունը՝ 16սմ

Սկանավորման ռեժիմները

B-ռեժիմ

• Մոխրագույն սանդղակի քարտերի քանակը՝ 25

• Կեղծ գունավորման քարտերի քանակը՝ 9

• Հիմնական հաճախականությունների առավելագույն քանակը՝ 4

• Հարմոնիկ հաճախականությունների մաքսիմալ քանակը՝ 4

Ստիբիլիզի ռեժիմի առկայություն



M-ռեժիմ

- Գունավոր M ռեժիմի հնարավորություն
- Անատոմիական M Ռեժիմի հնարավորություն

PW Իմպուլս-ալիքային դոզայեր՝ անկյան շեղումը

- Դոզայերային սպեկտրի եզրագծում և ավտոմատ հաշվարկների հնարավորություն
- Արագությունների սանդղակ՝ 0.1սմ/վ - 66սմ/վ
- PRF՝ 300-27900 Հց
- Սկանավորման անկյան մաքսիմալ շեղումը՝ $\pm 20^\circ$
- Սկանավորման անկյունների քանակը՝ 7

Սկանավորման անկյան կորրեկցիա՝ $\pm 90^\circ$, քայլը՝ 1°

CW – Մշտական-ալիքային դոզայերի հնարավորություն՝ անկյան շեղումը

- Դոզայերային սպեկտրի եզրագծում և ավտոմատ հաշվարկների հնարավորություն
- Արագությունների սանդղակ՝ 0.1սմ/վ - 61սմ/վ

CFM – Գունավոր դոզայերային քարտեզագրում

- Գունավորման քարտերի քանակությունը՝ 14
- PRF՝ 100-25000Հց
- Սկանավորման անկյան մաքսիմալ շեղումը՝ $\pm 20^\circ$
- Սկանավորման անկյունների քանակը՝ 7

Շարժումների ու շնչառության ժամանակ առաջացած արտեֆակտների ճնշման ալգորիթմ

PD – Էներգետիկ դոզայեր

- Գունավորման քարտերի քանակությունը՝ 14
- PRF՝ 100-25000Հց
- Սկանավորման անկյան մաքսիմալ շեղումը՝ $\pm 20^\circ$
- Սկանավորման անկյունների քանակը՝ 7

Շարժումների ու շնչառության ժամանակ առաջացած արտեֆակտների ճնշման ալգորիթմ

Ինֆորմացիայի տրամադրում B, M, D-ռեժիմներում, B/B, B/M, B/C, B/C/D, B/P/D

Տրիպլեքսային ռեժիմի առկայություն

Ուղղորդված էներգետիկ դոզայերի հնարավորություն

Վիրտուալ կոնվեքսի ռեժիմի հնարավորություն՝ գծային տվիչով

Հյուսվածքային կողավորված հարմոնիկայի ռեժիմի առկայություն

Ինվերսված հյուսվածքային հարմոնիկայի հնարավորություն

Էլաստոգրաֆիայի ծրագրի առկայություն

Պանորամիկ սկանավորման ծրագրի հնարավորություն

B-ռեժիմում պատկերների ավտոմատիկ օպտիմիզացիայի ծրագրի առկայություն

Սպեկտրալ դոզայերի ռեժիմում պատկերների ավտոմատիկ օպտիմիզացիայի ծրագրի առկայություն

CFM և էներգետիկ դոզայերի ռեժիմներում պատկերների ավտոմատիկ օպտիմիզացիայի ծրագրի առկայություն

Ուժ հետազոտությունների կարգաբերման և պերսոնալիզացիայի ծրագրի հնարավորություն

Ռեժիմների ավտոմատ փոփոխություն, չափումների ինիցիացիա սկանավորման ընթացքում

Ադապտիվ ալգորիթմի հիման վրա պատկերների օրգանոսպեցիֆիկ ռեժիմ և արտեֆակտների ճնշման հնարավորություն

- Շարժումների ու շնչառության ժամանակ առաջացած արտեֆակտների ճնշման ալգորիթմ

- B-ռեժիմից անկախ սկանավորման հաճախության փոփոխման հնարավորություն


- միոկարդի պատերի շարժման գունավոր ներկում

- Միոկարդի շարժումների հետազոտի քանակային անալիզի հնարավորություն

1. Արդովինալ, մանկաբարձական և զինեկոլոգիական, ուռուցիկական և անոթային հետազոտությունների համար կոնվեքսային տվիչ:

• Երևացող ալիքների հաճախականությունների տիրույթը՝ 2.0-5.0ՄՀց

• Էլեմենտների քանակը՝ 128



- Թեքության ռադիուսը՝ 60մմ
- Սկանավորման անկյունը՝ 58°

Էկրանին ցուցադրվող կենտրոնական հաճախականությունների քանակը B-ռեժիմում՝ 4

2. Գծային տվիչ մակերեսային օրգանների և կառուցվածքային էլեմենտների, պերիֆերիկ անոթների, նեոնատոլոգիայի և պեդիատրիայի համար,

• Երևացող ալիքների հաճախականությունների տիրույթը՝ 4.0-13.0ՄՀց

• Էլեմենտների քանակը՝ 128

• Սկանավորվող տարածքի լայնությունը՝ 40մմ

• Էկրանին ցուցադրվող կենտրոնական հաճախականությունների քանակը B-ռեժիմում՝ 4

• Սկանավորման անկյան շեղումը՝ ± 20°

3. Սեկտոր-ֆազային տվիչ անոթային, կարդիոլոգիական, տրանսկրանիալ և արդումիսալ հետազոտությունների համար

• Երևացող ալիքների հաճախականությունների տիրույթը՝ 1.7-4.0ՄՀց

• Էլեմենտների քանակը՝ 64

• Սկանավորվող տարածքի լայնությունը՝ 90մմ

Էկրանին ցուցադրվող կենտրոնական հաճախականությունների քանակը B-ռեժիմում՝ 3

Կադրերի առավելագույն քանակը կինոհանգույցում՝ 50000

Կինոհանգույցի առավելագույն տևողությունը՝ 27000վրկ

Կոշտ սկավառակի ծավալը՝ 500գԲ

DVD-RW

Ներկառուցված USB պորտերի քանակը՝ 6

Ստատիկ պատկերների ձայնագրման հնարավորություն CD/DVD, USB-flash և սկավառակի վրա, JPEG ֆորմատով

Դինամիկ պատկերների ձայնագրման հնարավորություն CD/DVD, USB-flash և սկավառակի վրա, AVI ֆորմատով

Արխիվացված ստատիկ պատկերների և կինոհանգույցների դիտելու ծրագիր արտաքին աշխատանքային կայանում՝ Windows ֆորմատով

Ծրագրային ու ապարատային ֆունկցիաներ, որոնք ապահովում են չմշակված ուլտրաձայնային տվյալների արխիվացիան՝ հետագա օպտիմիզացիայի և մշակման համար:

Ծրագրային ու ապարատային ֆունկցիաներ, որոնք ապահովում են սարքի հեռակա դիագնոստիկայի հնարավորությունը:

Չափումներ B-ռեժիմում

Հեռավորության չափման հնարավորություն

Մակերեսի չափման հնարավորություն

Ծավալի չափման հնարավորություն

Անկյան չափման հնարավորություն

Չափումներ M-ռեժիմում

Հեռավորության չափման հնարավորություն

Արագության չափման հնարավորություն

Ժամանակային ինտերվալի չափման հնարավորություն

Սրտային կծկումների հաճախության չափման հնարավորություն

Չափումներ D-ռեժիմում

Գծային արագության չափման հնարավորության առկայություն

Միջին արագության չափման հնարավորության առկայություն

Ժամանակային ինտերվալների չափման հնարավորության առկայություն

Ռեգիստրենտության ինդեքսի չափման հնարավորության առկայություն

Պուլսացիոն ինդեքսի չափման հնարավորության առկայություն

Ճնշման գրադիենտի չափման հնարավորության առկայություն

Ստենոզի աստիճանի չափման հնարավորության առկայություն

Սրտային կծկումների հաճախության չափման հնարավորության առկայություն



Արյան հոսքի թեք արագությունների պարամետրերի ավտոմատիկ չափման հնարավորության առկայություն:

Ցուցադրվող պարամետրերի քանակությունը՝ 13:

Հատուկ չափումներ ու հաշվարկներ

Հաշվարկների փաթեթների և գումարային եզրակացությունների առկայություն կարդիոլոգիական հետազոտությունների համար

Հաշվարկների փաթեթների և գումարային եզրակացությունների առկայություն անոթային հետազոտությունների համար

Հաշվարկների փաթեթների և գումարային եզրակացությունների առկայություն մանկաբարձական և զինեկոլոգիական հետազոտությունների համար

- Պտղի ներարգանդային զարգացման հետևման պրոտոկոլ

- Բազմապլազային հղիությունների հաշվարկային ծրագրեր

- Հոդային դիսպլազիայի հաշվարկային ծրագրեր

Հաշվարկների փաթեթների և գումարային եզրակացությունների առկայություն ուռուցիկական հետազոտությունների համար

Երկվամների հետազոտության համար հաշվարկների փաթեթների և գումարային եզրակացությունների առկայություն

Լրացուցիչ սարքեր

DICOM համակարգի առկայություն

CD/DVD ձայնագրման սարքի առկայություն

Վիդեո ելքեր

S-Video

VGA

Կոմպոզիտային ռեզիստրացիոն համակարգ

Թերմոպրինտեր Սև-Սպիտակ

Չափսերը՝

Բարձրությունը՝ 1410մմ

Լայնությունը՝ 720մմ

Խորությունը՝ 810մմ

Քաշը՝ 60կգ

Էլեկտրոսնուցում

Լարումը 220 Վ / 50 Հց

Մարսիմալ օգտագործվող հզորությունը՝ 400ՎԱ

Այլ պայմաններ

*Պարտադիր պայման է՝ ապրանքի չօգտագործված լինելը:

*Գործարանային երաշխիքային ժամկետը տեղադրման պահից 24 ամիս:

*Պահանջվող սարքավորման համար, առաջարկի արժեքի մեջ ներառված է մուտքի կարգավորումները, տեխնիկական և բժշկական անձնակազմին սարքի օգտագործման եղանակներին օն-տրեյնինգը, երաշխիքային սպասարկումը՝ տեղադրման պահից 24 ամիս:


*Երաշխիքային սպասարկման պայմաններ՝

ա/ սարքավորման խափանման դեպքում Վաճառողը պարտավոր է Գնորդի կողմից պահանջ ներկայացնելու պահից եռօրյա ժամկետում վերացնել թերությունները:

բ/ սարքավորման երաշխիքային և տերաշխիքային սպասարկումը պետք է իրականացվի սարքավորման արտադրող կազմակերպության սերտիֆիկացված ինժեների կողմից:

*Վաճառողը սարքավորման տեղադրման պահից սկսած պետք է ապահովի սարքավորումը շահագործող անձնակազմի ուսուցումը արտադրողի կողմից սերտիֆիկացված մասնագետի կողմից ըստ հետևյալ գրաֆիկի՝

Փուլ 1/ սարքավորման տեղադրման պահից սկսած ամիսը 3 անգամ, տևողությունը՝ 2 ամիս



ԳՆՈՐԴ

«Երևանի Մխիթար Հերացու
անվան պետական բժշկական համալսարան»
հիմնադրամ
ՀՀ, Երևան, իրավաբանական հասցե՝ Կոբյունի 2
«Հայրիզնեսրանկ» ՓԲԸ, Տերյան մ/ճ
h/h 11500166513800
ՀՎՀՀ 01503448

Ռեկտոր՝ Ա.Ա Մուրադյան



ՎԱՃԱՌՈՂ

«Ար.Մեդտեխնիկա» ՍՊԸ
ՀՀ, ք.Երևան, Զաքյան 8
«Կոնվերս Բանկ» ՓԲԸ
Հ/Հ 1930041595160100

ՀՎՀՀ 02604367

Էլ. հասցեն՝ armedtechnicalc@gmail.com

Հեռ. (010) 58 57 63

Տնօրեն՝ Վ.Թորոսյան



/ստորագրություն/
Կ.Տ

Պայմանագրի կողմ

 գտնվելու վայրը _____
 հհ _____

 հվհհ _____

Պատվիրատու

 գտնվելու վայրը _____
 հհ _____

 հվհհ _____

**ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
 ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՍ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ
 ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՄԱՆ**

« » « » 20 թ.
 Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ « » « » 20 թ.

Պայմանագրի համարը՝ _____

Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.

Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը կատարել է հետևյալ աշխատանքները, կամ մատուցել է հետևյալ ծառայությունները, կամ մատակարարել է հետևյալ ապրանքները

| Մատակարարված ապրանքների, կատարված աշխատանքների, մատուցված ծառայությունների | | | | | | | | |
|--|-----------|---|--|---------|--|---------|-------------------------------------|--|
| N | անվանումը | տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը | քանակական ցուցանիշը | | կատարման ժամկետը | | Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/ | Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/ |
| | | | ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի | փաստացի | ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի | փաստացի | | |
| | | | | | | | | |
| | | | | | | | | |

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Աշխատանքը հանձնեց

 ստորագրություն

 ազգանուն, անուն
 Կ.Տ.

Աշխատանքը ընդունեց

 ստորագրություն

 ազգանուն, անուն
 Կ.Տ.

ԱԿՏ N _____
 պայմանագրի արդյունքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Գնորդ) և _____
Գնորդի անվանումը Վաճառողի անվանումը
 (այսուհետ՝ Վաճառող) միջև 20 թ. _____-ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը
 պայմանագրի շրջանակներում Վաճառողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով
 Գնորդին հանձնեց ստորև նշված ապրանքները.

| Ապրանքի | | |
|-----------|----------------|---------------------|
| անվանումը | չափման միավորը | քանակը (վաստացի) |
| | | |
| | | |

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

 ազգանուն, անուն

 Ստորագրություն

Ընդունեց

հայտը նախագծած ներկայացուցիչ՝

 ազգանուն, անուն

 ստորագրություն